ք. Երևան, Ս. Դավթի 87ա «24» փետրվար 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 141-Վ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Արմինե Ռազմիկի Մաշուրյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 129/2022/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Արմինե Ռազմիկի Մաշուրյանի (Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ., 21 շ. 80 բն., ՀՎՀՀ՝ 27874492, ՀԾՀ՝ 6404740281) չկատարված հարկային պարտավորությունը 19.01.2023թ-ի դրությամբ կազմում է 6.370.024 դրամ, այդ թվում հարկ՝ 2.500.500 դրամ, տույժ՝ 1.369.024 դրամ, տուգանք՝ 2.500.500 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Արմինե Ռազմիկի Մաշուրյանի կողմից 29.04.2014թ. օտարվել է ք. Երևան, Աջափնյակ, Հ. Մարգարյան փ., 23 շենք, 9 բնակարան հասցեում գտնվող գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 15.300.000 ՀՀ դրամ, 18.07.2014 թ-ին ք. Երևան, Աջափնյակ, Ա. Արզումանյան փ., 13 շենք, 7 բնակարան հասցեում գտնվող գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 15.000.000 ՀՀ դրամ:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքում՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարի չգերազանցող ժամանակահատվածում:

Այսպիսով իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն երկրորդ գույքի օտարման գործարքը այլ հավասար պայմաններում համարվում է ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է ԱԱՀ վճարման պարտավորություն կրող:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածի համաձայն՝ վերոգրյալ գործարքից հաշվարկվում է ԱԱՀ 16,67% հաշվարկային դրույքաչափով:

ՀՀ կառավարության 19.02.2009թ-ի թիվ 199-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև գործարքի իրականացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմնի չի ներկայացվել իրավահարաբերության ծագման պահին գործող ԱԱՀ-ի 2014 թվականի 3-րդ եռամսյակի հաշվարկը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջե չեն վճարվել հարկի գումարները:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 19.01.2023թ-ի դրությամբ կազմում է 6.370.024 դրամ, այդ թվում հարկ՝ 2.500.500 դրամ, որը հաշվարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով, տույժ՝ 1.369.024 դրան, որը հաշվարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և տուգանք՝ 2.500.500 դրամ, որը հաշվարկվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ֆիզիկական անձ Արմինե Ռազմիկի Մաշուրյանից գանձել **6.370.024** դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

19.01.2023թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ
Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	ԱԱՀ	20.10.2014թ	2.500.500	1.369.024	2.500.500	6.370.024	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Սեդա Ասատրյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: